

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 40/3

ք.Երևան

10 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 20.11.2017թ. թիվ 366507/03 և թիվ 366508 որոշումների դեմ Անուշ Նիկոլայանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

Անուշ Նիկոլայանի կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 20.11.2017թ. թիվ 366507/03 և թիվ 366508 որոշումների դեմ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը նույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ *երեսուն օրվա ընթացքում*:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացվել է Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Իր հերթին, ՀՀ հարկային օրենսգրքի 440-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի պաշտոնատար անձանց այն գործողությունների բողոքարկումը, որոնք կապված են վարչական պատասխանատվության կիրառման հետ, կատարվում է վարչական իրավախախտումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Քննարկվող դեպքում Անուշ Նիկոլայանի կողմից բաց է թողնվել ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի 20.11.2017թ. թիվ 366507/03 և թիվ 366508 որոշումները վարչական կարգով բողոքարկելու ժամկետը (գործերը գտնվում են ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության վարույթում), հետևապես Հանձնաժողովն իրավասու չէ դիմում-բողոքն ընդունել վարույթ:

Ինչ վերաբերվում է Անուշ Նիկոլայանի կողմից բերված առաջին դիմում-բողոքին, ապա այն վարույթ չի ընդունվել, ինչի մասին բողոքաբերին տեղեկացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ 22.02.2018թ. թիվ 06/11-1/8854-18 գրությամբ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Անուշ Նիկոլայանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ